Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Տարբերակված ուսուցման անհարժեշտությունը առարկայի դասավանդման գործընթացում»

Վերապատրաստող, մենթոր՝ Արարատ Մովսեյան

Ուսուցիչ՝ Արմինե Նիկողոսյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն ---------- 3
- Տարբերակված ուսուցման խնդիրներն ու նպատակները ---------- 5
- Տարբերակված ուսուցումը՝ որպես ուսումնառության պայման և միջոց ---------- 9
- Ուսուցման անհատական մոտեցում ---------- 15
- Տարբերակված ուսուցման ռազմավարությունը ---------- 16
- Տարբերակված տնային առաջադրանքներ ---------- 19
- Եզրակացություն ---------- 22
- Գրականության ցանկ ---------- 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Էյնշտեյնն ասել է .<<Բոլորը կարող են հանճարներ լինել, միայն եթե հաշվի առնենք յուրաքանչյուրի կարողությունները, այլ ոչ թե ձկան մասին դատենք ծառ բարձրանալու կարողությամբ՝ նրան մատնելով ողջ կյանքում ամենավերջին անհաջողակը լինելու սեփական գիտակցմանը>>: Իսկապես, եթե ուզում ենք ներկա դարին համարժեք քաղաքացի կրթել, պետք է յուրաքանչյուրին իր հնարավորությունների սահմանում հանձնարարություններ տանք, այնպես անենք, որ հետաքրքրություն ցուցաբերեն դասի նկատմամբ, մասնակցեն դասապրոցեսին՝ անկախ իրենց գիտելիքների շրջանակի: Դրան հասնելու համար շատ կարևոր է կրթության ոլորտում որոշ բարեփոխումներ անել՝ մշակել դասավանդման նոր մեթոդներ ու ռազմավարություններ, սովորողների գործունեությունը խթանելու և առաջադիմության աճ ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր դասարան տարբերվում է դասարանում ընդգրկված աշակերտների պատրաստվածության աստիճանի, կարողությունների ու հետաքրքրությունների շրջանակների: Դասերը նույնպես տարբեր են և որքան էլ հաջողված լինի տվյալ դասին կիրառված մեթոդը, այնուամենայնիվ լրիվ նույնը չենք կարող կիրառել մեկ այլ դասարանում: Պետք է նոր մոտեցում, նոր մեթոդ օգտագործել, չէ որ սովորողների անհատականությունները տարբեր են: Ուսուցչի ձեռքում բոլոր մեթոդներն ու հնարները պետք է դիտարկել որպես գործիքներ, որոնց օգտագործման շնորհիվ աշակերտակենտրոն դաս կիրականացվի և բոլորը մեծ

հետաքրքրությամբ մասնակցություն կունենան ու կնդլայնեն իրենց գիտելիքների շրջանակը: Կարծում եմ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գտնի այն ճիշտ մեթոդը, որի արդյունքում դասն ավելի հետաքրքիր կդառնա, ինչն էլ իր հերթին կնպաստի, որ սովորողներն ունենան առաջադիմության: Ուսուցիչը կհասնի այս ամենին, եթե օգտագործի տարբերակված ուսուցման ռազմավարությունները:

Յուրաքանչյուր մանկավարժ շատ կարևոր է նաև, որ ապահովի հայոց լեզվի և գրականության գերազանց իմացություն, քանի որ այն մեր մայր լեզուն լինելուց բացի օգնում է սովորել ու հասկանալ դասագրքերի ծավալուն ու խրթին ձևակերպումները: Ինչպես ասել է Տերյանը. <<Լեզուն ազգի հոգին է, կենդանի է այդ հոգին՝ կենդանի այդ ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը>>: Այսպիսով՝ կարևորելով հայոց լեզու և գրականություն առարկաների իմացությունը՝ ես հետազոտական աշխատանքս գրելու համար ընտրել եմ տարբերակված ուսուցում թեման:

Մանկավարժական գործունեությանս ընթացքում աշխատել եմ տարբեր առանձնահատկություններ ու զարգացվածության մակարդակներ ունեցող երեխաների հետ, փորձել եմ գտնել տարբեր մեթոդներ ու միջոցներ, որպեսզի կարողանամ խթանել ու մոտիվացնել նրանց ուսումնական գործունեությանը: Փորձը ցույց է տվել, որ նույն առաջադրանքն աշակերտները անհատապես են հասկանում ու կատարում: Ուստի յուրաքանչյուր սովորողի պետք է տալ իր հնարավորություններին համապատասխան հանձնարարություն, չէ որ ամեն

մեկն իր գործի մեջ է վարպետ և իր կարողությունների շրջանակում միայն ձեռքբերումներ կունենա:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մոտիվացիայի բարձրացումը տարբերակված ուսուցման առաջին խնդիրն է, այն ստիպում է աշակերտին աշխատել և կատարելագործվել: Մոտիվացիայի միջոցով

երեխան կենտրոնանում է և հետաքրքրվում մատուցվող նոր նյութով՝ գրանցելով առաջընթաց: Այն օգնում է, որ յուրաքանչյուր սովորող ունենա ինքնուրույնություն, սովորի իր կարողություններին համապատասխան: Տարբերակված ուսուցման շնորհիվ սովորողը կկարողանա ավելի հեշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում: Աշակերտները հաշվի առնելով իրենց կորողություններն ու առանձնահատկություններն, ի վերջո կհասկանան, թե ինչ ուղղությամբ կարող են հետագայում ձեռքբերումներ ունենալ: Բացարձակ անկարող երեխաներ չկան, յուրաքանչյուր երեխա էլ ունի ուժեղ և թույլ կողմեր, հետաքրքրության սահմաններ: Ուսուցիչն իր հմտության շնորհիվ պետք է ուսուցումը կազմակերպի հաշվի առնելով հենց այդ ուժեղ կողմերն ու առանձնահատկությունները: Տարբերակված ուսուցման նպատակն այն է, որ ուշադրության կենտրոնում լինեն ինչպես թույլ, այնպես էլ մեծ ընդունակություններ ունեցող երեխաները, ինչպես նրանք՝ ովքեր դժվարանում են ընկալել կրթական ծրագրերը, այնպես էլ նրանք՝ ովքեր ավելի խորն են ուսումնասիրում նյութը: Եվ, ի վերջո, ի՞նչ է տարբերակված ուսուցումը և ի՞նչ է ուսուցման անհատական մոտեցումը: Այն դեպքում, երբ դասարանում սովորում են տարբեր հակումներով հնարավորություններով, հետաքրքրություններով, մտավոր և ֆիզիկական տարբեր զարգացում ունեցող երեխաներ, լավ կլինի օգտագործել տարբերակված մոտեցում՝ արդյունավետ ուսուցում ապահովելու համար:

Տարբերակված ուսուցման հիմնական նպատակն ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում այն է, որ յուրաքանչյուր սովորողի համար միջոց ապահովվի՝ իր կարողությունների, հակումների,

ընդունակությունների, ճանաչողական պահանջմունքների բավարարման և զարգացման նպատակով:

Հետազոտությունների արդյունքում եկա այն համոզման, որ տարբերակված ուսուցումն ամենաարդյունավետ եղանակն է սովորողների պահանջները լիարժեք բավարարելու համար, ինչի արդյունքում բոլոր երեխաները ներգրավված են լինում դասապրոցեսի մեջ: Ուզում եմ նշել նաև, որ սովորողներն անկախ իրենց տարիքից ունենում են զարգացվածության և ընդունակությունների տարբեր մակարդակներ: Նույն տարիքի երեխաները դրսևորում են գիտելիքների յուրացման տարբեր մակարդակներ, ուստի մանկավարժը պետք է ուսուցման գործընթացն այնպես իրականացնի, որ միջին կարողություններ ունեցող աշակերտները չտուժեն, իակ ուժեղ կարողություններ ունեցողները չձանձրանան ու չհոգնեն: Պետք է նշել, նաև, որ միջին կարողություններ ունեցող սովորողները նույնպես իրարից տարբերվում են, քանի որ նրանք ունեն տարբեր կարողություններ ու հետաքրքրություններ, հոգեկան գործընթացի զարգացան տարբեր մակարդակներ: Ուստի դասը պետք է կազմակերպենք այնպես, որ նրանցից ոչ մեկը չտուժվի, այլ առաջընթաց գրանցի:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ուսումնական գործունեության ընթացքում՝ դասի ժամանակ, ուսուցիչը դժվարանում է որևէ առաջընթաց գրանցել սովորողների միջև առկա մեծ տարբերությունների պատճառով, որոնք պայմանավորված են բազմաթիվ հանգամանքներով: Նախնական գիտելիքների հարցում մեծ դեր ունի ընտանիքը, որից էլ բխում է երեխայի բառապաշարը, մտավոր կարողությունները, արժեքային համակարգը,

ճանաչողական կարողությունների տարբերությունները՝ ընկալումը, կենտրոնացված ուշադրության տևողությունը, լեզուն, մտածողությունը և հիշողությունը: Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը միշտ պետք է ուշադրություն դարձնի և ուսումնասիրի սովորողների կարողությունները, անհատական առանձնահատկությունները և ավելի հեշտ դարձնի նրանց ուսուցման գործընթացը: Շատ կարևոր է, որ ուսուցիչը երեխաների մոտ սովորելու հանդեպ հետաքրքրություն ու գիտելիքների պակասը լրացնելու ցանկություն առաջացնի: Դա անելու համար պետք է նախ և առաջ նշենք սովորողների նույնիսկ ամենափոքր հաջողությունները, բացատրենք նրանց հետ մնալու պատճառները ու փորձենք միասին գտնել դժվարությունները հաղթահարելու միջոցներ: Եթե երեխաները զգան իրենց առաջընթացը, նույնիսկ աննշան հաջողությունից կոգեշնչվեն և կսկսեն ավելի լավ աշխատել՝ նրանց հետաքրքրությունը կմեծանա գիտելիքի հանդեպ: Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը, որը ուսուցման և դաստիարակության ճկուն գործընթաց է և բնութագրվում է աշակերտների անհատական ընդունակությունների վերլուծությամբ: Այս գործընթացն իրականացնելիս ուսուցիչը ոչ թե սովորողին պետք է հարմարեցնի ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը հարմարեցնի սովորողին՝ այն մշակելով, դարձնելով ավելի հեշտ յուրաքանչյուր երեխայի համար: Այս մեթոդի շնորհիվ դասին բոլոր աշակերտները անհամեմատ ավելի ակտիվ կլինեն և յուրաքանչյուրը կունենա իր անելիքը: Իսկ, երբ ուսուցիչն ամբողջ դասարանին նույն հանձնարարությունը տա և հաշվի չառնի աշակերտների անհատական ու հոգեբանական կարիքները, ապա նա չի կարող

ապահովել կրթական որակ և չի նպաստի, որ աշակերտները առաջ շարժվեն իրենց կարողություններին, ընդունակություններին համապատասխան: Այս կարևոր գործոնը, եթե անտեսվի, սովորողները կտուժեն, քանի որ չեն կարողանա հաղթահարել իրենց առջև ծառացած դժվարությունները և կնվազի նրանց հետաքրքրությունը ուսման հանդեպ: Սովորողը կդառնա ավելի ինքնավստահ, եթե զբաղվի իր ընդունակություններին, կարողություններին և հմտություններին համապատասխան հանձնարարություն:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԵՎ ՄԻՋՈՑ

Մեր օրերում տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն, դասապրոցեսի ընթացքում ուսուցիչները շատ են օգտագործում, այն թույլ է տալիս յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները բարելավել իրենց հնարավորությունների սահմանում: Երբ աշակերտներն առանձնանում են ըստ իրենց հնարավորությունների և չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական ծրագրերը կարելի է կիրառել տարբերակված ուսուցում: ԱՄՆ-ի ու Արևմտյան Եվրոպայի սահմանադրության համաձայն՝ նույն դասարանում կարող են սովորել տարբեր հաշմանդամություն, հուզական, ինչպես նաև վարքագծային խանգարումներ ունեցող երեխաներ, ում հետ աշխատում են

հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ, ուսուցիչներ, ովքեր փորձում են ազդել ոչ միայն աշակերտների վրա, այլև, աշխատանք տանելով նրանց ծնողների հետ, ստեղծում են հատուկ պայմաններ նրանց ինտեգրման ու զարգացման համար: Այսպիսով՝ աշակերտը դիտարկվում է ոչ թե որպես մանկավարժական ներգործության օբյեկտ, այլ որպես սուբյեկտ՝ իր ուրույն ներաշխարհով, արժեքային համակարգով և անհատական առանձնահատկություններով: Աշակերտը պետք է իր գործունեությունը ծավալի՝ զգալով ապահով, ազատ ինքնադրսևորման համար իրեն տրված հնարավորությունը: Մանկավարժները, միշտ խոսում են աշակերտի անհատականության մասին, բայց չկա հստակ մոտեցում, թե ինչպես պետք է հաշվի առնել սովորողի առանձնահատկությունները: Առանձնացնենք «տարբերակում» և «անհատականություն» տերմինները: Տարբերակելիս պետք է հաշվի առնել աշակերտների գերիշխող հատկությունները, իսկ անհատականության ժամանակ հաշվի են առնվում տվյալ սովորողի անձնային առանձնահատկությունները: Այսպիսով՝ ի հայտ է գալիս տարբերակված ուսուցումը, որն հանդիսանում է որպես ուսումնառության պայման և միջոց: Որքան էլ ուսուցիչը հմուտ լինի և բազմաբնույթ մեթոդներ օգտագործի, նա չի կարող բոլոր աշակերտների մոտ հավասարապես նույն արդյունքը գրանցել, և հենց այդ պատճառով էլ առաջանում է տարբերակված ուսուցման անհրաժեշտությունը:

Ուսուցիչը տարբերակված ուսուցում կարող է կիրառել դասի ցանկացած ժամանակահատվածում, նույնիսկ նոր նյութը հաղորդելուց հետո: Տարբերակված

ուսուցում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործողությունների հետևյալ հաջորդականությունը՝

- Ուսուցանվող նյութի ուսումնասիրում
- Տարբեր գործիքների և ռազմավարությունների կիրառում
- Տարբեր մակարդակի թեստերի կազմում, գրավոր ներկայացում
- Հին և նոր գիտելիքների միջև կապի ստեղծում և ամրապնդում
- Արդյունքների քննարկում և վերլուծում

Ուսումնառության կազմակերպման ժամանակ պետք է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Ընթերցողականին անհրաժեշտ է տրամադրել դասագրքեր, տեսողականին՝ նյութը բացատրող տեսադասեր, լսողականին՝ աուդիո դասագրքեր, կինեստետիկին՝ առցանց ինտերակտիվ հանձնարարություն: Մաթեմատիկական և արվեստի ուղղվածություն ունեցող աշակերտներին կարելի է նյութը մատուցել տարբեր տառատեսակներով և տարբեր գույների թվերով, սահիկաշարերով: Ըստ աշակերտի կարողության պետք է կիրառել տարբեր միջոցներ, թեկուզ կարելի է աշխատանքը իրականացնել գրադարանում, որպեսզի լինի հանգիստ ու անաղմուկ միջավայր: Տարբերակված ուսուցման ժամանակ ամեն մի աշակերտ կարող է ունենալ ակադեմիական նվաճումների գրանցամատյան, որտեղ ինքը կգնահատի իր գիտելիքները ու առանձնահատկությունները: Եթե յուրաքանչյուր սովորող կատարի իրեն հանձնարարված պահանջները՝ կստանա բարձր գնահատական: Ինքնագնահատումը կարևոր է այնքանով, որ սովորողը կարող է գնահատել իր

սկզբնական արդյունքները՝ համեմատելով ձեռք բերած նոր արդյունքների հետ: (https://forum.armedu.am/)

Տարբերակված ուսուցումը ուսուցչին հնարավորություն է տալիս ճիշտ կազմակերպել դասապրոցեսը՝ հաշվի առնելով դրա բոլոր բարդությունները: Տարբերակված ուսուցում կազմակերպելիս ցածր մակարդակից անցնել բարձրին: Տարբերակված ուսուցում չի նշանակում սովորողների մի մասին տալ ուսումնական նյութի մեծ ծավալ, մյուս մասին՝ քիչ, պարզապես ամեն մի սովորող պետք է սովորի ուսումնական նյութի նվազագույն ծավալը, իսկ այն սովորողը, ով ունի մեծ պոտենցիալ, չպետք է կորչի ՝ մնալով նվազագույն շեմում: Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը կազմակերպել՝ հաշվի առնելով երեխայի անհատական կարողությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տեսակի կրթության կազմակերպման արդյունքում սովորողների ամեն մի խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը հնարավորինս շատ մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական կարողություններին:

Տարբերակումը բնորոշվում է աշակերտների այնպիսի խմբերի առաջացմամբ, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

- ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
- խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
- տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի բարոյական ու մտավոր, ֆիզիկական և հուզական զարգացմանը, հնարավորություն է տալիս բացահայտել աշակերտի ստեղծագործական կարողությունները, հոգեբանական առանձնահատկությունները, մտավոր առանձնահատկությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար հաշվի առնելով նրա տարիքային անհատականությունը: Տարբերակված մոտեցումը, անշուշտ, փոխում է նաև ուցուցչի գործառույթները: Ուսուցչի հիմնական խնդիրն է դառնում սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը ենթադրում է.

ա/ հաղորդակցության ժողովրդավարական, հարգալից ոճ

բ/ բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային, անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը

գ/ աջակցող, խրախուսող, բայրացակամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով

դ/ գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում:

Ուսուցման արդյունավետությունը մեծ մասամբ կախված է նրանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում, ինչ ընտանիք, ինչպիսի բառապաշար, մտավոր կարողություններ, արժեքային համակարգ, կենտրոնացված ուշադրության տևողություն, լեզու, մտածողություն և հիշողություն ունի նա:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչն իր առջև խնդիր է դնում ուսումնասիրել աշակերտների անհատական կարողությունները, որպեսզի ավելի հեշտ դարձնի նրանց ուսուցման գործընթացը: Շատ կարևոր գործոն է աշակերտների մոտ սովորելու հանդեպ հետաքրքրություն ու գիտելիքների պակասը լրացնելու ցանկություն առաջացնելը: Դա անելու համար նախ և առաջ պետք է սովորողների նույնիսկ ամենափոքր հաջողություններն ու նվաճումները, բացատրենք նրանց հետ մնալու պատճառները ու փորձենք միասին գտնել դժվարությունները հաղթահարելու ճանապարհներ: Աշակերտները միշտ պետք է զգան իրենց առաջընթացը, քանի որ, նույնիսկ աննշան հաջողությունը ոգևորում է երեխային, մղում՝ ավելի լավ աշխատելու:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը: Այն ուսուցման և դաստիարակության ճկուն գործընթաց է և բնութագրվում է աշակերտների անհատական առանձնահատկությունների վերլուծությամբ: Անհատականացված ուսուցման կարևոր նպատակն այն է, որ հնարավորություն է տալիս լիովին հարմարեցնել բովանդակությունը, մեթոդներն ու աշակերտի ուսումնական գործունեության տեմպը, հետևել երեխայի յուրաքանչյուր գործողությանը և հստակ խնդիրների լուծման օպերացիաներին, ինչպես նաև հետևել չիմացությունից իմացության անցմանը, ուսումնական գործունեության մեջ ժամանակին կատարել անհրաժեշտ ուղղումներ: Այս ամենը սովորողին թույլ է տալիս աշխատել խնայողաբար, անընդհատ վերահսկել սեփական էներգիայի վատնումը, որը հնարավորություն է տալիս հասնել ուսումնական բարձր արդյունքների: Անհատական ուսուցումը համընդհանուր դպրոցում սահմանափակ է կիրառվում:

Անհատական մոտեցումը ''

- Մանկավարժության սկզբունք է, որի համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքում ուսուցիչը աշխատում է ոչ միայն աշակերտական խմբի, այլ առանձին աշակերտների հետ անհատական մոդելով՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները:
- Երեխայի հետ շփման գործընթացում շեշտը դրվում է նրա անհատական առանձնահատկությունների վրա ։
- Ուսումնական գործընթացում իրականացվում է երեխայի անահատական առանձնահատկությունների հաշվառում:
- Մանկավարժահոգեբանական պայմաններ են ստեղծվում ոչ միայն բոլոր սովորողների զարգացման, այլ նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման համար:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Տարբերակված ուսուցման ընթացքում հնարավոր է օգտագործել տարբեր ռազմավարություններ: Տարբերակում կարելի է կատարել ըստ առաջադրանքների, ռեսուրսի, ժամանակի, օժանդակության և արդյունքի՝ դրանցից յուրաքանչյուրը օգտագործելով առանձին կամ մի քանիսը միաժամանակ: Օրինակ՝ ուսուցիչը ուշադրության կենտրոնում պահելով ամեն մի երեխայի, կարող է բարձր առաջադիմություն ունեցող խմբում ընդգրկել թույլ առաջադիմություն ունեցող աշակերտին՝ թույլ տալ նրան կատարել պարզ հանձնարարություններ, և եթե

նույնիսկ սովորողը դժվարանում է գրավոր կատարել այն, ապա կարելի է նրան հնարավորություն տալ պատասխանը ներկայացնել սխեմայի կամ գրաֆիկի միջոցով: Տարբերակված ուսուցում կարելի է իրականացնել երեք հիմնական փուլերով: Նախ պետք է վեր հանել յուրաքանչյուր աշակերտի անհատական կարողությունները, ապա խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական հնարավորությունների և տարբերակում ամեն մի խմբի ուսումնական գործընթացը: Լավ կլինի, որ յուրաքանչյուր ուսուցիչ ինքն ընտրի աշակերտների խմբերի ընտրության մոտեցումը: Սխալ մոտեցում է աշակերտներին «թույլերի» ու «ուժեղների» բաժանելը: Իմ աշխատանքի ընթացքում տարբերակված ուսուցում փորձնական նպատակով կիրառվել է 9-րդ դասարանում: Աշակերտներին բաժանել են երեք պայմանական խմբերի: Առաջին խմբում լրացուցիչ օգնություն պահանջող աշակերտներն էին, երկրորդ խմբում՝ այն աշակերտները, ովքեր կարողանում են ինքնուրույն հաղթահարել նյութը, իսկ երրորդ խմբում նրանք, ովքեր կարողանում են կարճ ժամանակում հաղթահարել առաջադրանքն ու օգնել մյուսներին: Այնուհետև իրականացվեց ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման: Առաջին խումբը պետք է կարդա ուսումնական նյութը և պատմի՝ առանձնացնելով գլխավոր միտքը: Երկրորդ խումբը պետք է կարդա ուսումնական նյութը, կազմի պլան և հարցադրումներ: Երրորդ խումբը կարդալով ուսումնական նյութը, պետք է նյութի համառոտ բնութագրությունը տա և արտահայտի սեփական դիրքորոշումը:

Ամփոփման արդյունքում առանձնացրի գիտելիքի ընկալման երեք մակարդակներ՝

- Նվազագույն մակարդակ - մտապահում է, հասկացել է, վերարտադրում է:
- Միջին մակարդակ-յուրացրել է նյութը և կիրառում է միջին իրավիճակում:
- Բարձր մակարդակ–նյութը յուրացրել է լիարժեք, կիրառում է ոչ ստանդարտ վիճակում, աշխատանքին մոտենում է ստեղծագործաբար:

Ուսումնական նյութը սովորած երեխաների հետ տարա համապատասխան աշխատանքներ, որպեսզի գիտելիքները ընդլայնվի: Այն աշակերտները, որոնք խնդիրներ ունեին ուսումնական նյութի յուրացման հարցում, նրանց համար մշակեցի համապատասխան առաջադրանքներ: Երկրորդ խմբի աշակերտների համար, որպես խորհրդատու և ուսուցչի օգնական հաճախ նշանակում եմ առաջին խմբի աշակերտներին, իսկ երրորդ խմբի աշակերտների համար՝ առաջին և երկրորդ խմբի աշակերտներին: Դրական տեղաշարժը նկատելի է լինում քայլերի ճիշտ հերթականության դեպքում:
Շերտավորված ուսուցում կարելի է կատարել նաև խմբային աշխատանքի օգնությամբ: Խմբերը կարող ենք կազմել նույն կամ տարբեր գիտելիքներ, հնարավորություններ ու կարողություններ ունեցող սովորողներից, այս դեպքում կարևոր է, թե ուսուցիչն ինչ նպատակ է դրել իր առջև: Խումբը քննարկում ու լուծում է տրված հանձնարարությունները, որոնցից ամեն մեկը ստուգվում է ուսուցչի կողմից և ակտիվ քննարկվում խմբերում:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տնային հանձնարարությունը պետք է կատարվի երեխաների կողմից ինքնուրույն, այն նրանց ծավալած ուսումնական գործունեությունն է: Տնային առաջադրանքները տարատեսակ են և դրանց հիմնական նպատակը սովորողի ինքնուրույնության ձևավորումն է, որի արդյունքում երեխան ինքնակրթվում է և զարգանում է նրա՝ ուսումնաճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը: Տնային հանձնարարություն տալիս պետք է հաշվի առնել երեխաների գիտելիքների, կարողությունների սահմանը: Կան աշակերտներ որոնց համար պետք է որոշակիորեն անհատականացնել թե նպատակը, թե ծավալը և թե կատարման միջոցները՝ պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը: Լինում են դեպքեր, երբ ուսուցիչը մեծ ծավալի տնային առաջադրանք է հանձնարարում ողջ դասարանին և հաշվի չի առնում աշակերտների տարբեր կարողությունները, զարգացման տարբեր մակարդակ ունենալը ինչը մի շարք խնդիրների պատճառ է դառնում: Այդ խնդիրներից մեկը հենց այն է, որ թույլ կամ միջին կարողությունների տեր երեխան ստիպված դիմում է որևէ մեկի, որպեսզի իրեն օգնեն տնային հանձնարարությունը կատարել, կամ դիմում է դասընկերոջ օգնությանը, և արդյունքում մի շարք աշակերտների աշխատանքը նույնն է լինում: Այսպիսով, քանի որ երեխան տնային առաջադրանքը չի կարողանում կատարել, այն նրա համար դառնում է հոգս: Ճիշտ կլինի, որ տնային աշխատանքները տրվեն անհատական և տարբերակված ձևերով: Անհատական տնային աշխատանքը տրվում է դասարանի առանձին աշակերտներին՝ որոշակի նպատակով քարտերի վրա կամ աշխատանքային տետրում: Այս դեպքում ուսուցիչը ստուգում է տվյալ աշակերտի սովորածը, եթե

կարիք կա շտկումներ է անում և ուղղություն տալիս։ Անհատական տնային աշխատանքները կարելի է տալ նաև բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին՝ ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար։ Իսկ տարբերակված տնային աշխատանքի կատարման հիմքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ձևավորումն է, որն արվում է տարբերակված առաջադրանքների միջոցով։ Ուսուցիչը հիմնականում տնային աշխատանքները հանձնարարում է միջին աշակերտի մակարդակով, որպեսզի թե թույլ աշակերտները կարողանան կատարել և թե ուժեղները։ Եթե առաջադրանքը հանձնարարվի ուժեղ աշակերտի մակարդակով՝ թույլ աշակերտը կդժվարանա այն կատարել ինչի հետևանքով նա կկորցնի վստահությունը սեփական ուժերի նկատմամբ։ Նույն հանձնարարությունը թույլերի համար կարող է լինել բարդ, ուժեղների համար՝ հակառակը, արդյունքում տնային հանձնարարությունները արդյունք չեն տա։ Այդ խնդիրը կարելի է լուծել ցուցաբերելով տարբերակված մոտեցում՝ տնային աշխատանքը հանձնարարելիս։ Այսպիսով՝ ուսուցիչը տնային առաջադրանք տալիս պետք է հաշվի առնի ամեն մի աշակերտի կարողություններն ու հնարավորությունները, հանձնարարությունը տա յուրաքանչյուրին իր ընդունակություններին համապատասխան։ Օրինակ՝ թույլ ընդունակություններով սովորողին կարելի է տալ այնպիսի առաջադրանքներ, որտեղ շատ են կիրառվում դիդակտիկ պարագաներ։ Արդյունքում հանձնարարությունները կլինեն հստակ ու ավելի հեշտ ընկալելի։ Ուսուցիչը, հաշվի առնելով աշակերտի ուսումնառության ոճը և նախապատվությունները,

կարող է նրան առաջադրել այնպիսի հանձնարարություններ, որոնցում կամփոփվեն նյութի հիմնական պահանջները՝ թեստ, նախագիծ, հաշվետվություն:

Առաջադրանքի տիպերը՝ ըստ ուսումնառության ոճերի կարող են լինել՝

- Ընթերցողական - գրքի վերլուծություն, էսսե
- Տեսողական - թեմատիկ քարտեզ, սահիկաշար
- Լսողական - բանավոր հաշվետվություն
- Կինեստետիկ - մոդելավորում, լաբորատոր փորձեր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ տարբերակված և անհատական ուսուցումները իհարկե աշխատատար, գործնականում դժվար կիրառելի, բայց ոչ անհնար կազմակերպչական միջոցներ են, որոնք որոշակի մանկավարժական հմտությունների, փորձի, համբերության ու ցանկության շնորհիվ, կնպաստեն աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Ուզում եմ շեշտել, որ յուրաքանչյուր աշակերտ գիտելիքը ձեռք է բերվում անհատապես: Տարբեր խմբերում սովորող երեխաների համար գիտելիքի յուրացման գործընթացը տարբեր է: Տարբերակված ուսուցումը սովորողներին մեծ հնարավորություն է տալիս, որ

յուրաքանչյուրը կարողանա լիարժեք հասկանալ ուսումնական նյութը: Շատ կարևոր է, որ նյութը ճիշտ մեթոդներով փոխանցվի տարբեր մակարդակ ունեցող աշակերտներին, որպեսզի ուսուցման գործընթացը արդյունք ունենա: 9-րդ դասարանում, երբ կիրառվեց տարբերակված ուսուցումը՝ փորձնական նպատակով, դրական արդյունքը նկատելի էր: Ամեն մի երեխա, իր գիտելիքների, կարողությունների ու հմտությունների շրջանակում հանձնարարություն ստանալով՝ աշխատում էր սիրով ու մեծ ակտիվություն էր ցուցաբերում: Իսկ մինչև տարբերակված ուսուցման մեթոդը կիրառելը աշակերտների մի մասը անտարբեր էր, իսկ մյուս մասը չէր էլ մասնակցում դասին: Տարբերակված ուսուցումը կիրառելիս թե՛ անհատական, և թե՛ խմբային ձևերով արդյունավետ դասապրոցես ստացվեց՝ իր դրական կողմերով: Ուսուցման այս ձևն արդյունավետ է ինչպես թույլ, այնպես էլ օժտված աշակերտների համար, քանի որ նրանք ստանում են իրենց կարողություններին համապատասխան առաջադրանքներ, իսկ դասն արդեն չի ձանձրացնում նրանց: Կարևոր և դրական տեղաշարժ նկատվեց նաև տնային առաջադրանքների տարբերակման ժամանակ: Ամեն մի երեխա, ստանալով իր կարողություններին ու առանձնահատկություններին համապատասխան տնային առաջադրանք, կարողացավ այն կատարել ինքնուրույն՝ առանց որևէ մեկի օգնությանը դիմելու: Ամփոփելով հետազոտական աշխատանքս՝ եկա այն եզրակացության, որ սովորողների մոտ առաջադիմության աճ կգրանցվի այն դեպքում, երբ դասը նրանց համար հետաքրքիր ու բովանդակալից լինի՝ չձանձրանան դասի ժամանակ և ունենան իրենց զբաղվածությունը՝ իրենց կարողություններին

համապատասխան։ Ուստի արդի կրթական ոլորտում տարբերակված ուսուցումը մեծ դեր ու նշանակություն ունի։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
- Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Մանկավարժ 2005:
- Մանկավարժական միտք 117, Զանգակ, 2013:
- Веденина Татьяна Ивановна, Дифференциация обучения как важный фактор развития познавательных интересов школников, МОУ
- “Нижнеиртышская средняя общеобразовательная школа”, 2007:
- Зарецкий В. К., Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии, ИПИ, Москва 2004:

- Зинудин Абасович Абасов, Дифференциация обучения: сущность и формы, Журнал директор школи, 2004:
- https://forum.armedu.am/forum/
- https://coppershop.ru/hy/uhod-za-volosami/realizaciya-principov-individualnogo-i-%20differencirovannogo.html